Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 434-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Երևան 2012

Բովանդակություն

Ներածություն

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը,

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը,

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները,
III.1. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկները,

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված նպատակի՝ ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, Հանձնաժողովի կողմից 2013 թվականի ընթացքում իրականացվելիք մրցակցային քաղաքականության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Հայաստանի Հանրապետությունում մրցակցային քաղաքականության կիրարկումը վերջին տարիներին երկրի տնտեսության դինամիկ զարգացման հիմնական ուղղություններից է: Այժմ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է սոցիալ-տնտեսական զարգացման որակապես նոր փուլում, առկա են երկրի տնտեսական զարգացման կայուն միտումներ, որոնք պայմանավորված են ինչպես մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության համալիր միջոցառումների, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի և մրցակցային միջավայրի ձևավորմամբ:

Մրցակցային միջավայրի շարունակական բարելավումը հանդիսանում է երկրի տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից, որը և բարենպաստ պայմաններ կարող է ապահովել ձեռնարկատիրական գործունեության և շուկաների զարգացման և հասարակության պահանջների ամբողջական բավարարման համար: Ուստի պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության անկյունաքար է հանդիսանում մրցակցային քաղաքականությունը և օրըստօրե աճում է այն իրականացնող Հանձնաժողովի դերն առանձնապես մրցակցային օրենսդրության կիրարկման գործում:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ աշխատանքներ են տարվել մրցակցության համար բարենպաստ պայմանների ապահովման, գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ:

Համաձայն 2012-2013 թվականների մրցունակության մասին Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցի, որը ներկայացնում է մրցունակության առավել ճշգրիտ և ամբողջական գնահատականն աշխարհում՝ մշտապես գտնվելով միջազգային կազմակերպությունների, բիզնես շրջանակների, միջազգային առևտուր իրականացնողների ուշադրության կենտրոնում, Հայաստանի Հանրապետությունը բարելավել է իր ցուցանիշները նախորդ տարվա ցուցանիշների նկատմամբ՝ 144

պետությունների շարքում բարձրացրել է մրցունակության իր դիրքը 10 կետով, զբաղեցնելով 82-րդ տեղը:

Մասնավորապես, շուկայում գերիշխող ուժերի առկայության (ազդեցության) ցուցանիշով Հայաստանը բարելավել է իր դիրքը 43 կետով, ընդ որում այս ցուցանիշով Հայաստանն արձանագրել է լավագույն առաջընթացը 144 երկրների շարքում: Հայաստանն առաջ է Ուկրաինայից, Ռուսաստանից, Վրաստանից, Մոլդովայից, Լիտվայից, Հունգարիայից, Բուլղարիայից: Հարկ է նշել նաև, որ այս ցուցանիշով Վրաստանը վատթարացրել է իր դիրքը 9 կետով, Ռուսաստանը՝ 6 կետով, Մոլդովան՝ 19 կետով, Բուլղարիան, 19 կետով, Հունգարիան՝ 29 կետով:

Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով Հայաստանը բարելավել է իր դիրքը 22 կետով: Հայաստանից հետ են մնացել և վատթարացրել են իրենց դիրքը Վրաստանը 6 կետով, Մոլդովան՝ 7 կետով, Ռումինիան՝ 27 կետով: Ադրբեջանը, չնայած Հայաստանից 2 կետով առաջ է, սակայն արձանագրել է նշանակալի անկում՝ 32 կետով:

Հայաստանը տեղական մրցակցության ինտենսիվության ցուցանիշով բարելավել է իր դիրքը 9 կետով՝ արձանագրելով ավելի մեծ առաջընթաց, քան երկու հարևան երկրները: Այսպես, Հայաստանից անմիջապես հետ է մնում Ադրբեջանը, որը վատթարացրել է իր ցուցանիշը 2 կետով: Վրաստանը, չնայած Հայաստանից առաջ է 3 կետով, սակայն բարելավել է իր դիրքն ընդամենը 1 կետով:

Հայաստանի Հանրապետության ցուցանիշի բարձրացումն առաջին հերթին ապահովվել է մակրոտնտեսական միջավայրի կայունության ոլորտներում այլ երկրների նկատմամբ դիրքի բարելավմամբ (+31, 83-րդ տեղը նախորդ տարվա 114-ի փոխարեն) և ապրանքների շուկայի արդյունավետությամբ (+36, 72-րդ տեղը 108-ի փոխարեն), ի դեպ վերջին պարագայում՝ ի հաշիվ օրենսդրական բարեփոխումների և Հանձնաժողովի ավելի կոշտ մրցակցային քաղաքականության, լայնածավալ ու արդյունավետ աշխատանքի:

Հարկ է նշել, որ նշված առաջընթացն արձանագրվել է մի շարք գործոնների առկայությամբ, մասնավորապես.

- ✓ Ցուցանիշները հաշվարկվում են նախորդ տարվա ցուցանիշների հետ միջինացված և հետևաբար աճը կլիներ ավելի նշանակալի, եթե նախորդ

տարվա ցուցանիշները էականորեն չտարբերվեին այս տարվա ցուցանիշներից:

- ✓ Տարեցտարի երկրների շարքում ավելանում են նոր երկրներ, ինչն իր հերթին ինքնաբերաբար հանգեցնում է երկրի ցուցանիշների վատթարացման՝ համապատասխան մրցակցային արդյունավետ քաղաքականություն չիրականացնելու դեպքում:
- ✓ Տվյալ ցուցանիշները ձևավորվում են բիզնես շրջանակներում փակ գաղտնի հարցման միջոցով: Հատկանշական է, որ Հանձնաժողովը 2011 թվականին իրականացրել է առավել կոշտ քաղաքականություն և նախորդ տարիների համեմատ նշանակվել են ամենաբարձր տուգանքները, սակայն բիզնեսն օբյեկտիվորեն դրական է գնահատել մրցակցային միջավայրի բարելավումը:

Հանձնաժողովի կողմից ձեռնարկվող միջոցառումները հիմնված են ապրանքային շուկաների վերլուծության արդյունքների հիման վրա: Այսպես, Հանձնաժողովը 2012 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ուսումնասիրել է 19 ապրանքային շուկաներ, որոնցից 18-ը պարենային ապրանքային շուկաներ են, 1-ը՝ ոչ պարենային: Հարկ է նշել, որ վերը նշված ապրանքային շուկաներից 1-ը ցածր կենտրոնացված է, 9-ը՝ միջին կենտրոնացված, իսկ 9-ը՝ բարձր կենտրոնացված (Աղյուսակ 1):

2012 թվականի ընթացքում ուսումնասիրված ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 1

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Կենտրոնացվածության աստիճանը (CR3) և դրա բնութագրումը ****	
			անվանումը	բաժինը (%)	CR3	բնութագրումը
1	«Երշիկեղեն»	2011թ.	«Մուշ» ՍՊԸ	19.59	46.07	միջին
			«Աթենք» ՍՊԸ	13.98		
			«Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ	12.50		
2	«Բնական հյութեր»	2011թ.	«Ադամյում» ՍՊԸ	21.14	51.37	միջին
			«Կոկա Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ	16.75		
			«Սիս Նատուրալ» ՍՊԸ	13.48		
3	«Գարեջուր»	2011թ.	«Երևանի Գարեջուր» ՓԲԸ***	46.78	78.88	բարձր
			«Գյումրի Գարեջուր» ՍՊԸ***	18.28		
			««Կոտայք» Գարեջրի Գործարան» ՍՊԸ***	13.82		
4	«Գինի (բացի ածխաթթու պարունակողներից)»	2011թ.	«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ	22.60	53.5	միջին
			«Վեդի ալկո» ՓԲԸ	16.68		
			«Հոկտեմբերյանի կոնյակի գործարան» ՓԲԸ	14.22		
5	«Մակարոնեղեն»	2011թ.	«ԷյԷյէֆփիսի» ՀՁ ՍՊԸ	15.8	34.2	ցածր
			«Ջի Էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ՍՊԸ	9.3		
			«Թալգրիգ» ՍՊԸ	9.2		
6	«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	2011թ.	«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ**	50.09	69.82	միջին
			«Հոկտեմբերյանի կոնյակի գործարան» ՓԲԸ**	11.38		
			«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ	8.35		
7	«Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	2011թ.	«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ**	61.66	92.53	բարձր
			«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ**	21.09		
			«Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ»	9.78		
8	«Մսի պահածո»	2011թ.	«Գեղարդ» ԱԿ**	57.6	84.7	բարձր
			«Արմեն-Համիկ» ՀՁ ՍՊԸ**	19.7		
			«Նիկոլա Ինթերնեյշնլ Արմենիա» ՍՊԸ	7.4		
9	«Մարինացված պահածո»	2011թ	«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ	18.35	45.8	միջին
			«Վեգեքոմ» ՍՊԸ	17.98		
			«ՄԱՊ» ՍՊԸ	9.47		
10	«Ձկան պահածո»	2011թ.	«Պոլիտան» ՍՊԸ	23.6	59.6	միջին
			«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ	18.6		
			«Խապե Գրուպ» ՍՊԸ	17.4		
11	«Մրգային պահածո»	2011թ.	«Մեղրու պահածոների գործարան» ԲԲԸ	24.7	46.5	միջին
			«Ալիշան» ՍՊԸ	12.9		
			«Թամարա ֆրութ» ՍՊԸ	8.9		

12	«Թեյ»	2011թ.	«Էսթինգ» ՍՊԸ	20.3	51.8	միջին
			«Մելիքա ՋՄ» ՍՊԸ	18.1		
			«Սովռանո» ՍՊԸ	13.4		
13	«Շոկոլադե սալիկ»	2011թ. հունվար -մայիս	«Մարսերալ» ՍՊԸ**	46.36	70.6	բարձր
			«Նյու Ֆորս» ՍՊԸ**	16.70		
14	«Շոկոլադե բատոն»	2011թ. հունվար -մայիս	««Դերժավա-Ս» և «Սլավ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերություններ» անձանց խումբ*	92.1		բարձր
15	«Շոկոլադե դրաժե»	2011թ. հունվար -մայիս	«Դերժավա-Ս» ՓԲԸ**	57.15	94.67	բարձր
			««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ**	29.91		
16	«Շոկոլադե մածուկ»	2011թ. հունվար -մայիս	«Սլավ Գրուպ» ՓԲԸ***	36.46	72.17	բարձր
			««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ***	19.00		
			«Սովռանո» ՍՊԸ***	16.72		
17	«Շոկոլադե կոնֆետներ»	2011թ. հունվար -մայիս	««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ***	39.80	82.46	բարձր
			«Սովռանո» ՍՊԸ***	23.38		
			«Ապեյրոն» ՍՊԸ***	19.27		
18	«Շոկոլադե կոնֆետների հավաքածու (բոնբոներկա)»	2011թ. հունվար -մայիս	««Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ**	60.90	83.64	բարձր
			«Սովռանո» ՍՊԸ**	17.23		
19	«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի»	2011թ.	«Ֆուրնիֆուդ» ՍՊԸ	24.4	62.5	միջին
			«ԱՍԷԴԼ» ՍՊԸ	21.8		
			«Շին Գլասս» ՍՊԸ	16.3		

*տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:
** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:
*** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:
**** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70%<CR-3<100%, միջին աստիճան՝ եթե 45%<CR-3<70%, ցածր աստիճան՝ եթե CR-3<45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Ցածր կենտրոնացված է եղել «Մակարոնեղեն» ապրանքային շուկան, որտեղ կենտրոնացվածության աստիճանը (CR-3) կազմել է ընդամենը 34.2%, որտեղ առաջատար տնտեսվարող սուբյեկտի բաժինը կազմել է 15.8%: Դա բացատրվում է բարձր մրցակցության առկայությամբ, քանի որ այս ապրանքային շուկայում տնտեսական գործունեություն են ծավալում 95 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից 49-ն արտադրողներ են, 46-ը՝ ներկրողներ (Աղյուսակ 2):

Միջին կենտրոնացված շուկաներում կենտրոնացվածության աստիճանը տատանվում է 45.8%-ից մինչև 69.8% միջակայքում: Այդ ապրանքային շուկաներն են՝ «Երշիկեղեն», «Բնական հյութեր», «Գինի (բացի ածխաթթու պարունակողներից)», «Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ», «Մարինացված պահածո», «Ձկան պահածո», «Մրգային պահածո», «Թեյ»,

«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի»: Վերլուծությունը ցույց է տվել, որ այս ապրանքային շուկաներում ևս առկա է բարձր մրցակցություն, ինչի մասին է վկայում այն փաստը, որ այս ապրանքային շուկաներում տնտեսական գործունեություն են ծավալում 26-ից մինչև 56 տնտեսվարող սուբյեկտներ, արտադրողների քանակը տատանվում է 21-ից մինչև 32-ի միջակայքում (բացառությամբ «Ձկան պահածո», «Թեյ» և «Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի» ապրանքային շուկաների, որտեղ արտադրողներ չկան), ներկրողների քանակը՝ 11-ից մինչև 50-ի միջակայքում: Հարկ է նշել, որ տվյալ ապրանքային շուկաները մրցակցության տեսանկյունից դինամիկ զարգացում ունեցող շուկաներ են, ինչի մասին է վկայում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում ապրանքների իրացման ծավալների համեմատությունը: Ի դեպ, միջին կենտրոնացված ապրանքային շուկաներում արտահանման ծավալները տատանվում են 7.9%-ից 83.2% միջակայքում: Այս ինն ապրանքային շուկաներից ութում առկա չեն գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, բացառությամբ «Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ» ապրանքային շուկայի, որտեղ կան երկու գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ (Աղյուսակ 2):

Ուսումնասիրված ապրանքային շուկաներից բարձր կենտրոնացված են եղել «Գարեջուր», «Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ», «Մսի պահածո», ինչպես նաև շոկոլադե արտադրանքների 6 ապրանքային շուկաները: Այս շուկաներում բարձր կենտրոնացվածության աստիճանը բացատրվում է այս ապրանքային շուկաներում գործող խոշոր արտադրողների և ներկրողների առկայությամբ, որոնց բաժինը տարբեր ապրանքային շուկաներում տատանվում է 36.49%-ից մինչև 92.10% միջակայքում: Բարձր կենտրոնացված ապրանքային շուկաներից յուրաքանչյուրում կան 1-ից 3 գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, իսկ բոլոր 9 ապրանքային շուկաներում գործում են գերիշխող դիրք ունեցող 19 տնտեսվարող սուբյեկտներ (Աղյուսակ 2):

2012 թվականի ընթացքում ուսումնասիրված ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը և ապրանքի շրջանառությունը

Աղյուսակ 2

h/h	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը			Ապրանքի շարժը				
		ընդամենը	արտադրող	ներկրող	չ/մ	ներկրվել է	արտադրվել է	արտահանվել է	իրացվել է
1	«Երշիկեղեն»	43	32	11	տոննա	75.8	2507.5	202.3	2363.1
2	«Բնական հյութեր»	56	21	35	հազ. լիտր	9999.1	16412.6	3388.3	23878.9
3	«Գարեջուր»	21	6	15	հազ. լիտր	3315.2	15030.6	1741.3	16273.4
4	«Գինի (բացի ածխաթթու պարունակողներից)»	41	27	14	հազ. լիտր	501.4	115047.4	809.3	3688.1
5	«Մակարոնեղեն»	95	49	46	տոննա	3853.2	3300.4	20.5	7108.7
6	«Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	28	28	0	հազ. լիտր	0	11338.7	9189.2	1857.3
7	«Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ»	18	18	0	հազ. լիտր	0	3144.0	2878.7	272.7
8	«Մսի պահածո»	22	4	18	տոննա	45.6	260.6	71.8	253.3
9	«Մարինացված պահածո»	56	25	31	տոննա	962.6	908.6	298.1	1359.4
10	«Ձկան պահածո»	26	0	26	տոննա	953.8	0	0	743.4
11	«Մրգային պահածո»	56	25	31	տոննա	25.3	1676.6	1049.4	222.7
12	«Թեյ»	50	-	50	տոննա	301.6	-	-	302.9
13	«Շոկոլադե սալիկ»	28	-	-	տոննա	325.54	46.09	-	386.63
14	«Շոկոլադե բատոն»	10	-	-	տոննա	530.22	14.18	-	507.81
15	«Շոկոլադե դրաժե»	9	-	-	տոննա	64.67	47.29	-	110.14
16	«Շոկոլադե մածուկ»	15	-	-	տոննա	83.48	26.84	-	106.44
17	«Շոկոլադե կոնֆետներ»	45	-	-	տոննա	1100.0	700.0	-	1450.0
18	«Շոկոլադե կոնֆետների հավաքածու (բոնբոներկա)»	17	-	-	տոննա	79.92	-	-	371.5
19	«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի»	40	0	40	հազ. քմ	1740.0	0	0	1681,7

Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությամբ 56 պարենային ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող են համարվել 64 տնտեսվարող սուբյեկտ, ընդ որում այդ 56 ապրանքային շուկաներից 30-ում տնտեսվարող սուբյեկտները եղել են համատեղ գերիշխողներ, այդ թվում 13 ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտները գերիշխող դիրք ունեցող են համարվել միասին գրավելով տվյալ ապրանքային շուկայի մեկ երկրորդը, իսկ մնացած 17 շուկաներում՝ միասին գրավելով տվյալ շուկայի երկու երրորդը: Ոչ պարենային 70 ապրանքային (ծառայությունների) շուկաներում գերիշխող դիրք ունեցող են համարվել 43 տնտեսվարող սուբյեկտ, ընդ որում 8 ապրանքային շուկաներից 4-ում տնտեսվարող սուբյեկտները գերիշխող դիրք ունեցող են համարվել միասին գրավելով տվյալ ապրանքային շուկայի մեկ երկրորդը, իսկ մնացած 4 շուկաներում՝ միասին գրավելով տվյալ շուկայի երկու երրորդը: Դեղերի 16 շուկաներում գերիշխող դիրք ունեցող են համարվել 10 տնտեսվարող սուբյեկտ, ընդ որում 3 դեղերի շուկաներում տնտեսվարող սուբյեկտները գերիշխող դիրք ունեցող են համարվել միասին գրավելով տվյալ ապրանքային շուկայի մեկ երկրորդը:

Միևնույն ժամանակ, նոր խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է առևտրային օբյեկտ և առևտրային ցանց հասկացությունները, որով առևտրային ցանց է համարվում երկու կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբը, որոնք գտնվում են ընդհանուր կառավարման ներքո կամ գործում են միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո: Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ (ի դեպ գործող Օրենքում գերիշխող դիրքի ճանաչման միակ չափանիշ է հանդիսանում օբյեկտների քանակը և հաշվի չի առնվում օբյեկտների առևտրային մակերեսը):

Ուսումնասիրության արդյունքում 24 տնտեսվարող սուբյեկտներ (առևտրային ցանցեր) համարվել են գերիշխող դիրք ունեցող: Հանձնաժողովի կողմից գերիշխող դիրք ունեցող են համարվել 6 պարենային ապրանքների առևտրային ցանցեր, 5 բենզալցակայանների ցանցեր, 9 դեղատների ցանցեր և 4 սալիկների ու սանիտարական տեխնիկայի առևտրային ցանցեր: Վերը նշված տնտեսվարող

սուբյեկտների նկատմամբ իրականացվում է մշտական հսկողություն վերջիններիս կողմից մրցակցության օրենսդրության խախտումների կանխարգելման և դադարեցման ուղղությամբ, հիմնականում մանրածախ գների հիմնավորվածության առումով:

Գների դիտանցումը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաներում գների փոփոխությանը հետևելու լծակ, ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումների, ինչպես նաև հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և կանխարգելման միջոցներից մեկը: Դիտարկվող ապրանքային շուկաներում վաճառքի փաստացի գների ամրագրման նպատակով Հանձնաժողովի կողմից իրականացվում են նաև հսկիչ գնումներ, որոնց արդյունքում ձեռք բերված տեղեկություններն օգտագործվում են ապրանքային շուկաների ուսումնասիրությունների ընթացքում: Ցորենի, ալյուրի, կարագի, կաթնամթերքի, շաքարավազի, բուսական յուղի և այլ ապրանքային շուկաների նկատմամբ Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում ցուցաբերած մշտական ուշադրության հետևանքով հնարավորություն ստեղծվեց որոշակիորեն զսպել գների արհեստական բարձրացման միտումները:

Որոշ դեպքերում գների աճը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով և, առաջին հերթին, համաշխարհային շուկայում նրանց փոփոխություններով, սակայն, միևնույն ժամանակ գների արհեստական աճ է տեղի ունենում նաև շուկայի մասնակիցների հակամրցակցային գործողությունների արդյունքում, մասնավորապես, գնային համաձայնություններով, որն իրականում խնդիր է հանդիսանում մրցակցության զարգացման և մրցակցային միջավայրի ձևավորման համար:

Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում են բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաները: Արդի պայմաններում բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող և գերիշխող կամ մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերահսկումն ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական նշանակություն: Նման հսկողության միջոցով Հանձնաժողովը նպատակ ունի տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն ուղղորդել շուկայական

տնտեսության կանոնների պահպանմանը: Հանձնաժողովը շարունակում է իրականացնել մրցակցության օրենսդրության տեսանկյունից մենաշնորհ կամ օլիգոպոլ տիպի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի, այդ թվում գնագոյացման վերահսկողություն՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով կանխել գերիշխող (մենաշնորհ) դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր չարաշահումները: Այդպիսի խախտումների կանխումը և արգելումը Հանձնաժողովի կարևոր գործառույթներից է:

Այսպես, Հանձնաժողովը 2012 թվականի առաջին եռամսյակում «Ազոտական պարարտանյութեր» ապրանքային շուկայում հարուցել է վարչական վարույթ, որի արդյունքում ամրագրել է, որ ազոտական պարարտանյութերի շուկայում գործող «Քեթրին գրուպ» ընկերությունը չարաշահել է գերիշխող դիրքը: Դեռևս նախորդ տարի տվյալ ապրանքային շուկայում Հանձնաժողովը սահմանել էր հատուկ հսկողություն պարարտանյութի վաճառքի գների վրա, որպեսզի շուկայում գործող գերիշխող տնտեսվարողները պարարտանյութն իրացնեն ողջամիտ՝ տվյալ դեպքում 7 հազար դրամ գնով: Հետևողականորեն իրականացվող դիտանցումների ընթացքում պարզվել է, որ «Քեթրին գրուպ» ընկերությունը որոշ խմբաքանակներ 7000 դրամի փոխարեն իրացրել է 7600 դրամով: Այս առնչությամբ Հանձնաժողովն ընկերությունից պահանջել է հիմնավորումներ՝ գնային փոփոխության վերաբերյալ: Ընդ որում, այս շուկայի մյուս երկու գերիշխողները («Ագրիմատկո Արմենիա» ՍՊԸ և «Մասիսի բերրիություն» ՍՊԸ), գնային որևէ փոփոխություն չեն իրականացրել: Ըստ «Քեթրին գրուպ» ընկերությունից ստացված պարզաբանումների, տեղի է ունեցել ապրանքի ձեռքբերման գնի աճ, ինչպես նաև գնի վրա ազդել են լրացուցիչ տրանսպորտային ծախսեր: Սակայն, նշվածներից և որևէ մեկը փաստաթղթերով չի հիմնավորվել: Բացի այդ, Հանձնաժողովը ստուգումների միջոցով պարզել է, որ այն ժամանակահատվածում, երբ պարարտանյութը վաճառվել է բարձր արժեքով, «Քեթրին գրուպ» ընկերությունը ներմուծում չի իրականացրել, այլ վաճառել է պահեստում առկա մնացորդները, որոնք ձեռք էր բերել ավելի ցածր գնով: Հանձնաժողովի որոշմամբ «Քեթրին Գրուպ» ընկերության նկատմամբ գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակվել է տուգանք հինգ միլիոն դրամի չափով: Միաժամանակ, «Քեթրին Գրուպ» ընկերությունից հօգուտ պետական բյուջե է գանձվել

2011 թվականի հուլիս ամսվա ընթացքում ազոտական պարարտանյութերի վաճառքի գների չհիմնավորված բարձրացման միջոցով ընկերության ստացված լրացուցիչ շահույթը՝ հինգ միլիոն յոթանասունյոթ հազար երեք հարյուր երեսունվեց դրամի չափով:

Մրցակցության զարգացման կարևոր հիմնախնդիր է նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու համար հավասար պայմանների ստեղծումը: Թեկուզև Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում նվազեցվել են մուտքի, վարչական և նմանատիպ այլ խոչընդոտները, սակայն որոշ շուկաներում խոչընդոտները ստեղծվում են այդ շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Հանձնաժողովն իրականացրել է դեղերի պետական գնումների ոլորտում ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 134 բուժհաստատություններից 109-ը թույլ են տվել պետական գնումների ընթացակարգի, մասնավորապես մրցույթ չհայտարարելու մասով խախտում, որն իր հերթին որոշ դեպքերում հանգեցրել է մրցակցային օրենսդրության խախտման: Ընդ որում, 66 բուժհաստատություններ ընդհանրապես մրցույթներ չեն հայտարարել, իսկ 43-ը դեղերի ձեռքբերման վերաբերյալ մրցույթներ հայտարարել են միայն առանձին դեպքերում: Հանձնաժողովի կողմից բացահայտվել է, որ 26 բուժհաստատությունների կողմից կազմակերպված 37 մրցույթները ձևական բնույթ են կրել: Այդ մրցույթներին մասնակցել են դեղերի վաճառքով զբաղվող 7 ընկերություններ, սակայն մշտապես մրցույթը շահել է նույն ընկերությունը, իսկ մյուսները դուրս են մնացել ինչ-ինչ տեխնիկական խնդիրների պատճառաբանությամբ:

Մրցույթներ չհայտարարելու դեպքում բուժհաստատություններն անհրաժեշտ դեղորայքը ձեռք են բերել շատ ավելի բարձր գներով, ինչն առավել ակնհայտ է դրսևորվել այն դեպքերում, երբ վերջինները մատակարար ընկերությունների հետ եղել են փոխկապակցված:

Բացի այդ, պետական գնումների շրջանակում կազմակերպված մրցույթների ժամանակ դեղերի շուկայում գործող որոշ խոշոր տնտեսվարողներ չարաշահել են իրենց գերիշխող դիրքը:

Այսպիսով, պետական գնումների ոլորտում բուժհաստատությունների և դեղեր մատակարարող ընկերությունների միջև պայմանավորվածությունները և օրենսդրության պահանջների խախտումները, ուղեկցվելով պետական բյուջեի միջոցների օգտագործման անարդյունավետությամբ, լրջորեն խոչընդոտել են մրցակցային միջավայրի զարգացմանը: Ուսումնասիրությունների առաջին փուլն ավարտելուց հետո, Հանձնաժողովի նիստում վարույթներ են հարուցվել դեղերի առքուվաճառքով զբաղվող 15 ընկերությունների և 12 բուժհաստատությունների նկատմամբ:

Հանձնաժողովը դիմումի հիման վրա հարուցել է վարչական վարույթ՝ դեղերի ոլորտում պետական գնումների կազմակերպման ընթացքում շուկայի մուտքի հնարավոր խոչընդոտների վերաբերյալ: Հարուցված վարչական վարույթի ընթացքում ուսումնասիրվել են ոչ միայն բողոքին առնչվող փաստերը, այլ նաև վերջին տարիների ընթացքում իրականացված մրցույթների գործընթացին վերաբերող փաստաթղթերը, որի արդյունքում Հանձնաժողովի կողմից հայտնաբերվել են օրենքին հակասող գործողություններ, որոնք կրել են հակամրցակցային բնույթ: Մասնավորապես, մի շարք բուժհաստատություններ, խախտելով պետական գնումների մասին օրենքի պահանջը, դեղորայք են ձեռքբերել առանց մրցույթ հայտարարելու, կամ այդ մրցույթները կրել են ձևական բնույթ: Բացի այդ, հայտնաբերվել են դեպքեր, երբ մրցույթին մասնակցած և պարտված ընկերությունը բուժհաստատությանը կատարել է նվիրատվություն, որի արդյունքում խաթարվել է մրցութային գործընթացը և բուժհաստատությունը, գնման պահանջի վերացման պատճառաբանությամբ, պայմանագիր չի կնքել մրցույթում հաղթող ճանաչված տնտեսվարող սուբյեկտի հետ: Հանձնաժողովը հակամրցակցային է դիտարկել նման գործողությունները: «Նատալի ֆարմ» ընկերության նկատմամբ կիրառվել է տուգանք՝ ընդհանուր 50 միլիոն դրամի չափով և պարտադրվել է, որպեսզի ընկերությունը վերացնի և հետագայում բացառի նման վարքագիծը: Վարչական վարույթի արդյունքում Հանձնաժողովը, բացի «Նատալի ֆարմ» ընկերությունից, ևս այլ 8 տնտեսվարողների և շուրջ երեք տասնյակ բուժհաստատությունների գործողությունները դիտարկել է որպես համամրցակցային գործողություններ: Այդ տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Եվրոֆարմ» ՍՊԸ, «Ռուսֆարմ» ՍՊԸ, «Ամիկուս» ՍՊԸ, «Էգդանի» ՍՊԸ, «Մեգի Էլ» ՍՊԸ, «Կամելիա»

ՍՊԸ, «Անիկոֆարմ» ՍՊԸ, Ա/Ձ Հրանտ Գևորգյանը: Այդ բուժհաստատություններն են՝ «Երևանի թիվ 20 պոլիկլինիկա», «Երևանի թիվ 19 պոլիկլինիկա», «Սևանի հիվանդանոց», «Տաշիրի բժշկական կենտրոն», «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա», «Գուգարքի կենտրոնական պոլիկլինիկա», «Սպիտակի բժշկական կենտրոն», «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա», «Ստեփանավանի բժշկական կենտրոն», «Երևանի թիվ 22 պոլիկլինիկա», «Չարենցավանի բժշկական կենտրոն», «Վեդու Ծննդատուն», «Հրազդանի բժշկական կենտրոն», «Երևանի թիվ 4 պոլիկլինիկա», «Վեդու բժշկական կենտրոն», «Աբովյանի ծննդատուն», «Դիլիջանի բժշկական կենտրոն», «Իջևանի առողջության կենտրոն», «Մեծամորի բժշկական կենտրոն», «Վաղարշապատի հիվանդանոց», «Երևանի թիվ 5 պոլիկլինիկա», «Նոյեմբերյանի հիվանդանոց», «Մարտունու ծննդատուն», «Աբովյանի բժշկական կենտրոն», «Արարատի հիվանդանոց», «Մարտունու բժշկական կենտրոն», «Քաջարանի բժշկակա կենտրոն», «Արմավիրի բժշկական կենտրոն»: Քանի որ Հանձնաժողովն առաջին անգամ էր այս ոլորտում նման ուսումնասիրություններ իրականացնում և հաշվի առնելով, որ բացի «Նատալի ֆարմ» ընկերությունից մնացած բոլոր ընկերությունները համեմատաբար փոքր ընկերություններ են, այդ պատճառով նախազգուշացում հայտարարեց վերոնշյալ տնտեսվարողներին: Ինչ վերաբերում է բուժհաստատություններին, որոնք խախտել են պետական գնումների գործընթացը, դրանով սահմանափակելով մրցակցությունը և նպաստելով տնտեսվարողների հակամրցակցային գործողություններին, Հանձնաժողովը զգուշացրեց բուժհաստատություններին հետագայում ձեռնպահ մնալ նման վարքագծի դրսևորումից: Ուսումնասիրության ընթացքում որոշ խնդիրներ են առաջացել նաև օրենսդրության անկատարության հետևանքով:

Պետական գնումների մասին օրենսդրության ոլորտում առկա սողանցքները փակելու և այս ոլորտի օրենսդրությունը բարելավելու նպատակով, Հանձնաժողովը մի շարք օրենսդրական առաջարկներ է մշակել, որոնք տրամադրվել են համապատասխան պետական մարմիններին:

Հանձնաժողովը բազմակողմանիորեն ուսումնասիրել է բենզինի ներկրմամբ և իրացմամբ զբաղվող ընկերությունների, այդ թվում՝ «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերության վարքագիծը հեղուկ վառելիքի շրջանառության ոլորտում և հայտնաբերել

է մրցակցության օրենքի մի շարք խախտումներ: Հանձնաժողովը պարզել է, որ, մասնավորապես ընկերության վարած գնային քաղաքականությունն ուղղված է փոքր բենզալցակայանների սնանկացմանը և վերջինների սեփականատերերը ստիպված իրենց բիզնեսը ոչ շահավետ պայմաններով վաճառում են «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությանը:

Քանի որ ընկերությունը տվյալ տարածաշրջանում հանդիսանում է բենզինի և դիզելային վառելիքի խոշոր մատակարար, ապա տասնյակ ընկերություններ՝ մանրածախ շուկայի մասնակիցներ, վառելիքը ձեռք են բերում հատկապես նրանից: Պարզվել է, որ ընկերությունը մեծածախ բազաներից վառելիքն իրացնում է այն գնով, ինչ գնով որ արդեն իսկ վաճառում է վերջինիս պատկանող մանրածախ ցանցի միջոցով: Հանձնաժողովի ուսումնասիրությամբ բացահայտվել են տասնյակ դեպքեր, երբ փոքր բենզալցակայանների տերերը ստիպված իրենց բիզնեսը վաճառել են վերջինիս, կամ նրա հետ կնքել համատեղ օգտագործման պայմանագիր՝ ոչ շահավետ պայմաններով: Ըստ այդ պայմանագրերի, շահույթի 98%-ը տնօրինում է «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը, իսկ մնացած 2%-ը՝ տվյալ բենզալցակայանի իրական սեփականատերը: Փաստորեն, շահագործելով այլ տնտեսվարողի հիմնադրած բիզնեսը, շահույթը գրեթե ամբողջությամբ ստացել է «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը: Հանձնաժողովն ուսումնասիրությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հանձնաժողովի որոշմամբ գերիշխող դիրքի չարաշահման համար «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունը տուգանվել է 100 միլիոն դրամով:

Հանձնաժողովի կարևոր հիմնախնդիրներից է նաև սպառողների շահերի պաշտպանությունը: Տվյալ գործառույթն ավելի է կարևորվում, երբ մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից ծառայությունները տրամադրվում են ոչ բավարար, կամ ոչ սահմանված ժամկետում՝ ստեղծելով սպառողների համար արհեստական խոչընդոտներ:

Քաղաք Երևանի Ամիրյան 4/6 շենքի մի շարք բնակիչների և «Գրիար» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացվել էին դիմումներ, որոնցում նրանք բողոքում էին իրենց թաղամասի բնակելի տներին էլեկտրամատակարարում չապահովելու համար: Դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է

վարչական վարույթ: «Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում» ապրանքային շուկայում մենաշնորհ դիրք ունեցող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության վարքագիծը դիտարկվել է որպես մենաշնորհ դիրքի չարաշահում և Ընկերությանը տրվել է նախազգուշացում՝ խախտումները հետագայում բացառելու հանձնարարությամբ:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովը շարունակում է աշխատանքներ իրականացնել բացահայտված գերիշխող դիրքի չարաշահումների փաստի առնչությամբ, մասնավորապես սպառողների շահերի պաշտպանության ուղղությամբ: Ուղևորափոխադրումների ապրանքային շուկայում, որտեղ մենաշնրոհային դիրք ունի «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերությունը, իրականացվում են աշխատանքներ ուղևորափոխադրման տոմսերի վաճառքի կանոնակարգման և բարելավման ուղղությամբ:

Հանձնաժողովը դիմումի հիման վրա նաև վարույթ է հարուցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից այլ տնտեսվարող սուբյեկտների համար իր ենթակառուցվածքի մուտքի հնարավոր խոչընդոտներ ստեղծելու կապակցությամբ:

Ոչ պակաս արդիական է Հայաստանում գործող առևտրային ցանցերի կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման երևույթների ուսումնասիրման, հայտնաբերման և դրանց կանխարգելման համապատասխան գործառույթների իրականացումը: Այդ կապակցությամբ Համաշխարհային բանկը Հանձնաժողովի պատվերով իրականացնում է «Հայաստանում առևտրային ցանցերի կողմից գերիշխող դիրքի չարաշահման պրակտիկա» թեմայով ուսումնասիրություն, որն իր մեջ նաև կպարունակի խորհրդատվություն նշված երևույթների վերացման և տվյալ ոլորտում մրցակցության բարելավման ուղղությամբ:

Հանձնաժողովը շարունակում է հսկողություն իրականացնել խոշոր տնտեսվարող սուբյեկտների և հատկապես բնական մենաշնորհների նկատմամբ, որն ուղղված է վերջիններիս կողմից գերիշխող դիրքի չարաշահման կանխարգելմանը, ինչը նպաստում է սպառողների շահերի պաշտպանությանը:

Այսպես, քաղաքացին 2010 թվականի նոյեմբերին դիմել է «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը նշելով, որ իր

բնակարանը զրկված է էլեկտրամատակարարումից, և խնդրել է տրամադրել առանձին բաժանորդային քարտ՝ վճարումներ կատարելու համար: Ընկերությունը պատասխան գրությունում նշել է, որ բնակիչը նախկինում օգտվել է մեկ այլ քաղաքացու անվամբ գրանցված բաժանորդային քարտից, որի պարտքը կազմում է 648735 դրամ: Ընկերությունը նշել է նաև, որ Բնակչի կողմից այդ պարտքը վճարելուց հետո կկնքվի էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր և կվերականգնվի էլեկտրական սնուցումը: Բնակիչը 2011 թվականի դեկտեմբերին Ընկերությանը Պայմանագիր կնքելու դիմում է ներկայացրել, որի ժամանակ պարտադիր չի եղել ներկայացնել տարածքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, այլ բավարար է եղել ներկայացնել տարածքի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթուղթ: Բնակիչը որպես իրավունքները հավաստող փաստաթուղթ ներկայացրել է Երևանի քաղաքապետի որոշումը, որը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից համարվել է իրավունքը հավաստող փաստաթուղթ: Սակայն Ընկերությունը Բնակչի հետ Պայմանագիր չի կնքել պատճառաբանելով, որ Բնակիչը չի ներկայացրել իրավունքները հավաստող փաստաթղթեր: Այժմ վերոնշյալ խնդիրը լուծված է՝ Ընկերության և Բնակչի միջև կնքվել է Պայմանագիր և Բնակիչը հնարավորություն է ստացել սպառել էլեկտրաէներգիա, սակայն ինչպես պարզվել է, ուսումնասիրության ընթացքում Ընկերությունն անհիմն կերպով է մերժել Բնակչի կողմից 2011 թվականի դեկտեմբերին Պայմանագիր կնքելու ներկայացված դիմումը, քանի որ Երևանի քաղաքապետի որոշումը, համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի, համարվում է իրավունքները հավաստող փաստաթուղթ: Ընկերության կողմից անհիմն կերպով մերժելու պատճառով Բնակիչը երկար ժամանակ հնարավորություն չի ունեցել սպառել էլեկտրաէներգիա: Հանձնաժողովը շարունակում է ուսումնասիրություններ իրականացնել՝ վերջնական որոշում կայացնելու համար:

Տնտեսական համակենտրոնացման պետական կարգավորումը հանդիսանում է մենաշնորհների հանգեցնող դեպքերի կանխման կարևոր գործիքներից՝ ուղղված տնտեսության կայունության ապահովմանը և մրցակցության զարգացմանը: Ուստի,

համակենտրոնացման վերահսկման գործառույթը հանդիսանում է մրցակցային քաղաքականության կարևոր ուղղությունը: Համակենտրոնացման պետական վերահսկողությունը միտված է մրցակցային միջավայրի վատթարացման արգելմանը և գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման կանխարգելմանը և բացառմանը: Այդ պատճառով էլ միացումների և կլանումների առավել խոշոր գործարքներն իրականացվում են Հանձնաժողովից թույլտվություն ստանալու դեպքում: Համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների արդյունքում կայացվել է թվով 8 թույլտվության որոշում, իսկ մեկ տնտեսվարող սուբյեկտի՝ «Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում չհայտարարագրված համակենտրոնացման համար:

Մրցակցության պաշտպանության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը և դադարեցումը:

Հանձնաժողովը, հնարավոր անբարեխիղճ մրցակցության բացահայտման նպատակով «ՄԳԱ Վոթըր» ընկերության նկատմամբ հարուցել էր վարչական վարույթ «Էվրի Դեյ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացրած դիմումի հիման վրա: Դիմումում մասնավորապես նշվում էր, որ «ՄԳԱ Վոթըր» ընկերությունը, սպառողին առաջարկելով խմելու մաքուր ջուր, հումքային ծագման մասին տալիս է ոչ ճիշտ և սպառողին թյուրիմացության մեջ գցող տեղեկություններ. առ այն, որ «ՄԳԱ Վոթըր» ընկերության կողմից վաճառվող «Մաքուր ջուր» ապրանքանիշի ջրի շշալցման ժամանակ օգտագործվող հումքային ջուրը վերցվում է ուղղակիորեն լեռնային աղբյուրից, այլ ոչ թե քաղաքային ջրամատակարարման ցանցից:

Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ «ՄԳԱ Վոթըր» ընկերությունն իր կողմից արտադրվող ապրանքի վրա մակնշելով «Բնական աղբյուրի խմելու ջուր» արտահայտությունը, սպառողներին գցում է մոլորության մեջ՝ ապրանքի վերաբերյալ ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, քանի որ «Բնական աղբյուրի խմելու ջուր» արտահայտությունը որևէ կերպ չի կարող արտացոլել ընկերության արտադրանքի փաստացի հատկանիշներն այն դեպքում, երբ ընկերությունն իր արտադրանքի համար հումք

հանդիսացող ջուրը վերցնում է քաղաքային ջրամատակարարման ցանցից, հետևաբար անհիմն է ընկերության այն պնդումը, որ «Բնական աղբյուրի խմելու ջուր» մակնշումը մատնանշում է ջրի իրական ծագումը: Այսպիսով, «ՄԳԱ Վոթըր» ընկերության կողմից քաղաքային ջրամատակարարման ցանցից վերցված և վերամշակված ջուրը որպես բնական աղբյուրի ջուր իրացնելը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման):

Հաշվի առնելով, որ իրավախախտումը կատարվել է սննդամթերքի շրջանառության ոլորտում լայն սպառում ունեցող ապրանքի արտադրության (շշալցման) և իրացման գործընթացում, ինչն անմիջականորեն վնասել է Հայաստանի Հանրապետությունում սպառողների շահերը և փաստացի բացասական ազդեցություն է ունեցել խմելու ջրերի իրացմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցային իրավիճակի վրա՝ «ՄԳԱ Վոթըր» ընկերությունն օգտագործելով էժան հումք՝ ստացել է զգալի առավելություն շուկայում գործող այլ ընկերությունների նկատմամբ:

«ՄԳԱ Վոթըր» ընկերության նկատմամբ Օրենքի խախտման համար նշանակվել է տուգանք՝ ընկերության 2011 թվականի հասույթի մեկ տոկոսի չափով: Միաժամանակ, «ՄԳԱ Վոթըր» ընկերությանը հանձնարարվել է 5-օրյա ժամկետում դադարեցնել Օրենքի խախտմամբ ապրանքների արտադրությունն ու իրացումը:

Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել նաև մանկապարտեզներում պետական գնումների շրջանակում ձեռք բերվող սննդամթերքի ոլորտում: Ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե որքանով են արդյունավետ օգտագործվում պետության կողմից մանկապարտեզներին հատկացվող ֆինանսական միջոցները և որքանով են բարեխիղճ աշխատում սննդի մատակարար հանդիսացող տնտեսվարողները:

Վարույթի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել է ՀՀ ողջ տարածքում գործող 575 մանկապարտեզների գործունեությունը: Արդյունքում բացահայտվել են ոչ միայն մրցութային կանոնների խախտման, այլ նաև մատակարար ընկերությունների կողմից անբարեխիղճ վարքագծի դրսևորումներ:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից բացահայտվել են մի շարք դեպքեր, երբ տնտեսվարողները մանկապարտեզների հետ կնքել են կարագի

մատակարարման պայմանագիր, սակայն կարագի փոխարեն երեխաների սննդի համար տրամադրել են բուսասերուցքային խառնուրդ՝ սփրեդ կամ մարգարին, որոնք թե որակական և թե գնային առումով մի քանի անգամ զիջում են կարագին: Ավելին, որոշ մանկապարտեզների փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ պետության կողմից երեխաների համար տրամադրված սննդի գումարով գնվել են այնպիսի ապրանքներ, որոնց օգտագործումը մանկական սննդում պարզապես անհնար է պատկերացնել: Օրինակ՝ սուրճ, բաստուրմա, սուջուխ, ձկան և մսի պահածոներ, կծու պղպղեղ և այլն:

Հատկապես մարզերում բացահայտվել են նաև այնպիսի դեպքեր, երբ մանկապարտեզների տնօրենները գնել են հենց սփրեդ, քանի որ հաշիվ-ապրանքագրերում հստակ նշված է այդ մասին: Եթե նախորդ դեպքում տնօրենները նշում էին, որ խնդրի մասին տեղյակ չեն եղել, ապա այս դեպքում ակնհայտ է, որ նրանք իմացել են սփրեդի ձեռքբերման մասին:

Հանձնաժողովի ուսումնասիրությունները փաստել են, որ հատկապես մարզերում, մի շարք ընկերություններ մանկապարտեզների տնօրենների փոխադարձ համաձայնությամբ սննդի մատակարար են դարձել՝ առանց մրցույթների անցկացման, ինչն օրենքի խախտում է: Նման գործելաոճը նպաստել է այս դաշտում անառողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը, քանի որ տասնյակ և միգուցե ավելի բարեխիղճ տնտեսվարողներ զրկվել են մրցույթներին մասնակցելու հնարավորությունից:

Մի շարք տնտեսվարողների վաճառքի փաստաթղթերից պարզվել է, որ վերջինները մանկապարտեզներին «կարագ» են մատակարարել 1000-1600 դրամով, այն դեպքում, երբ այդ նույն ժամանակահատվածում կարագի շուկայական գինը 2 անգամ ավելի թանկ է եղել, ինչը փաստել է, որ վաճառված ապրանքը կարագ չէ: Խուսափելով Հանձնաժողով ներկայացնել ձեռքբերման փաստաթղթերը, տնտեսվարողները նշել են, որ կարագը կամ սփրեդը գնել են շուկայից՝ առանց փաստաթղթերի: Այնուհետև Հանձնաժողովը տնտեսվարողներից պահանջել է՝ ներկայացնել ձեռքբերված ապրանքների համապատասխանության սերտիֆիկատները, որպեսզի ի վերջո պարզի, թե մատակարարները իրականում ինչ ապրանք են գնել և վաճառել: Արդյունքում պարզվել է, որ տնտեսվարողները

հիմնականում ներկայացնում են միևնույն սերտիֆիկատները: Ստացվում է, որ տնտեսվարողը կարող է ձեռք բերել ցանկացած այլ ընկերության համապատասխանության սերտիֆիկատի պատճե և անհայտ ծագման ապրանքն իրացնել նշված փաստաթղթի ներքո: Բացի այդ, սերտիֆիկատները պարունակում են ընդհանուր բնույթի տեղեկատվություն, տրվում են երկար ժամանակահատվածով և դրանց մեջ չեն նշվում կոնկրետ ապրանքների խմբաքանակները և, ընդհանրապես այդ սերտիֆիկատներով հնարավոր չէ իդենտիֆիկացնել տվյալ ապրանքը:

Հանձնաժողովն անընդունելի և դատապարտելի է համարել տնտեսվարողների նման վարքագիծը, առավել ևս, որ խնդիրն առնչվում է մանկահասակ երեխաներին: Այդ իսկ պատճառվող որոշվել է կիրառել անբարեխիղճ մրցակցության համար օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցի առավելագույն չափ՝ տվյալ տնտեսվարողի տարեկան հասույթի 1%-ի չափով: Հանձնաժողովի ուսումնասիրություններով բացահայտված օրինախախտ ընկերություններն են՝ «Լուս Աշխարհ» ՍՊԸ, ԱՁ Վոլոդյա Հովսեփյան, ԱՁ Երեմ Ասատրյան, «Ոսկե խարիսխ» ՍՊԸ, «ԱԲԱՖ» ՍՊԸ, «Սեար գրուպ» ՍՊԸ, «Երեքնուկ» ՍՊԸ, ԱՁ Թամարա Զոհրաբյան, ԱՁ Կարապետ Կարապետյան, ԱՁ Մանուկ Մարգարյան, ԱՁ Նվեր Սևումյան, ԱՁ Ռիմա Մարգարյան, ԱՁ Արամայիս Գևորգյան, ԱՁ Արման Համբարձումյան, ԱՁ Արմեն Հովեյան, ԱՁ Խանում Սիմոնյան, «Այգաբեր» ՍՊԸ, «Աբովյան Սիթի» ՍՊԸ, «Արարտ» ՍՊԸ, «Էթյունի» ՍՊԸ, «Կրիստալ» ՍՊԸ, ԱՁ Ռիմա Տոնոյան, ԱՁ Նարինե Վիրաբյան, ԱՁ Վոլոդյա Փանոսյան, ԱՁ Գառնիկ Խաչիկյան, ԱՁ Ամալյա Ներկարարյան:

Նշենք նաև, որ Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկած խախտումները նաև օրենսդրական բացերի արդյունք են: Խոսքը մասնավորապես վերաբերում է մանկապարտեզներում երեխաների համար նախատեսված սննդի կազմակերպման կարգին, որը թերի է: Այդ կարգում բացակայում է, թե որոնք են երեխաների համար թույլատրելի և արգելված սննդամթերքները: Օրինակ՝ Ռուսաստանի դաշնությունում գործում է նորմատիվ իրավական ակտ, որը հստակ սահմանում է երեխաների սննդի համար օգտագործվող սննդամթերքի ցանկը:

Հանձնաժողովն ուսումնասիրությունների ողջ փաթեթն ուղարկել է ՀՀ Գլխավոր դատախազություն, ինչպես նաև բոլոր այն պետական մարմիններին, որոնց կարգավորման դաշտում գտնվում են վերոնշյալ խնդիրները:

Հանձնաժողովը դիմումի հիման վրա հարուցել է վարչական վարույթ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից բջջային հեռախոսների միջոցով ինտերնետային ծառայության մատուցման հետ կապված: Դիմողը նշել է, որ օգտվել է Ընկերության «էքսկլյուզիվ բիզնես» սակագնային փաթեթից՝ ներառելով երկու հեռախոսահամար (տվյալ փաթեթում սակագինը 1 մեգաբայթի համար կազմում է 49 դրամ): Այնուհետև, առաջին ամսվա հաշիվը ստանալուց հետո պարզվել է, որ մեկ հեռախոսի սակագինը կազմել է 1 մեգաբայթի համար 49 դրամ, իսկ երկրորդինը՝ 90 դրամ: «ԱրմենՏել» ընկերությունը դիմողին գրավոր պատասխանել է, որ երկրորդ հեռախոսի համար կիրառվել են «Ինտերնետ բոլորի համար» փաթեթի սակագները, ինչը նշենք հասանելի է Ընկերության բոլոր բաժանորդներին, և վերջինս երկրորդ հեռախոսով «էքսկլյուզիվ բիզնես» փաթեթի սակագներից օգտվելու համար բջջային հեռախոսից պետք է կատարվեր լրացուցիչ կարգավորումներ, ինչի հետևանքով օգտվել է «Ինտերնետ բոլորի համար» ծառայությունից, որը կարգավորումներ չի պահանջում: Հանձնաժողովը վարույթի շրջանակներում գրավոր տեղեկություններ է պահանջել Ընկերությունից և գործը դեռևս ընթաքի մեջ է:

Հանձնաժողովը դիմումի հիման վրա ևս մեկ վարչական վարույթ է հարուցել հեռահաղորդակցության ոլորտում: Քաղաքացին «Օրանժ-Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ինտերնետային ծառայությունից օգտվելու նպատակով պայմանագիր է կնքել վերջինիս հետ՝ ստանալով USB մոդեմ 1 դրամ պայմանական արժեքով, պայմանով, որ մեկ տարի ժամկետով պետք է օգտվի այդ ծառայությունից: Մեկ տարի ժամկետի ավարտից հետո, քաղաքացին այլևս վճարումներ չի կատարել, համարելով, որ պարտավորություններ չունի Ընկերության նկատմամբ: Սակայն երկու ամիս անց «Օրանժ-Արմենիա» ընկերությունը ծանուցել է քաղաքացուն երկու ամսվա վճարումների պարտքի մասին: Հանձնաժողովը գրավոր տեղեկություններ է պահանջել «Օրանժ-Արմենիա» ընկերությունից: Վարչական վարույթը դեռևս ընթացքի մեջ է:

Հանձնաժողովը շարունակում է աշխատանքներ իրականացնել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման ուղղությամբ: Օրենքի խախտման դեպքերը վերաբերում են տնտեսվարող սուբյեկտի կողմից գրանցված կամ չգրանցված ապրանքային և սպասարկման նշանների նկատմամբ շփոթության առաջացմանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից ապրանքների գովազդման ընթացքում որակի և այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության չհիշատակման, ապրանքի բնութագրերի (արտադրության տարեթիվ, ամիս, օր և այլն) վերաբերյալ համապատասխան տեղեկատվության չհիշատակման, ապրանքի արտաքին տեսքի, օրինակ՝ գրանցված կամ չգրանցված արդյունաբերական նմուշի, ապրանքի փաթեթավորման, գույնի կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի նկատմամբ հասարակության մոլորեցմանը:

2010 թվականից մեծապես ակտիվացել են աշխատանքները մրցակցային օրենքի խախտումների դեմ պայքարի ուղղությամբ: Մասնավորապես, եթե 2008 և 2009 թվականներին Հանձնաժողովը կայացրել էր տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու 31 որոշում, 2010 թվականին այդ ցուցանիշը կազմել է 107 որոշում, 2011 թվականին՝ 197 որոշում, իսկ 2012 թվականի առաջին ինն ամիսների դրությամբ՝ 109 որոշում: Ինչ վերաբերում է կիրառված ֆինանսական տուգանքների բացարձակ մեծություններին, ապա միայն 2012 թվականի առաջին ինն ամիսների դրությամբ տնտեսվարող սուբյեկտները հակամրցակցային գործողությունների համար տուգանվել են 167 միլիոն դրամի չափով (այստեղ ներառված չեն տարեկան հասույթի 1%-ի չափով տուգանված 26 տնտեսվարող սուբյեկտների տուգանքի գումարները, քանի որ Ծրագրի ներկայացման պահին Հանձնաժողովը չի ստացել համապատասխան տեղեկատվություն Ընկերությունների հասույթների վերաբերյալ), 2011 թվականին՝ 351 միլիոն դրամի չափով, 2010-ի՝ 37 միլիոնի, 2009-ի՝ 10 միլիոնի և 2008-ի՝ 9 միլիոնի համեմատ: Հատկանշական է, որ, ի տարբերություն նախորդ տարիների, Հանձնաժողովը 2010, 2011 և 2012 թվականներին կայացված և դատական կարգով բողոքարկված որոշումներից և ոչ մեկը վերջնական դատական ակտով անվավեր չի ճանաչվել, ինչը խոսում է Հանձնաժողովի գործունեության արդյունավետության, հետևաբար նաև կայացված որոշումների հիմնավորվածության մասին: Մասնավորապես, 2010 թվականին բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 28 որոշում, որոնցից բոլորով առկա է Հանձնաժողովի օգտին կայացված դատական ակտ, 2011 թվականին բողոքարկվել է

Հանձնաժողովի թվով 20 որոշում, որոնցից 14-ով դատարանը վճիռ է կայացրել Հանձնաժողովի օգտին, իսկ 2012 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ բողոքարկվել է 4 վարչական ակտ, որոնցից 3-ով որոշում է կայացվել Հանձնաժողովի օգտին, իսկ մնացած գործերով դատավարությունը շարունակվում է: Ներկայումս Հանձնաժողովում առկա են հարուցված և չավարտված թվով 2 վարչական վարույթներ գերիշխող դիրքի չարաշահման և թվով 40 վարչական վարույթներ անբարեխիղճ մրցակցության դրսևորումների վերաբերյալ: Հանձնաժողովը սկսել է ակտիվ ուսումնասիրություններ իրականացնել և 2013 թվականին շարունակելու է նաև պետական գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանն ուղղված գործողությունները, հրապարակային վարույթները:

Վերը նշված բոլոր հիմնախնդիրների օպերատիվ հայտնաբերման, կասեցման և լուծման գործառույթների իրականացմանը բնականաբար դրական ազդեցություն է ունեցել 2011 թվականին Օրենքում կատարված փոփոխություններն ու լրացումները:

Այնուամենայնիվ, Օրենքի վերջին փոփոխություններում տեղ չեն գտել որոշ դրույթներ կամ փոփոխություններ, որոնք կնպաստեին Հանձնաժողովի գործառույթների իրականացմանը:

Հանձնաժողովի կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական օժանդակության վերահսկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Նշված օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ԵՄ չափանիշների հետ համապատասխանության ապահովման, Հանձնաժողովի վերահսկողական լիազորությունների ընդլայնման, Օրենքի խախտումների համար տուգանքների չափերի համար միասնական մոտեցումների ապահովման, Գնումների գործընթացի վերահսկողության արդյունավետության

բարձրացման և բողոքարկման լիազորությունները Հանձնաժողովին վերապահելու պահանջներով: Միևնույն ժամանակ, «Պետական օժանդակության վերահսկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետությունում պետական օժանդակության ոլորտում կատարյալ թափանցիկություն ապահովելու և տրամադրվող պետական օժանդակության հետևանքով տնտեսական մրցակցության խաթարումներից խուսափելու պահանջներով: «Պետական օժանդակության վերահսկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը փոխարինելու է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածով ամրագրված պետական օժանդակության վերաբերյալ գործող դրույթներին, որոնք առավելապես ընդհանրական բնույթ են կրում: «Պետական օժանդակության վերահսկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է ԵՄ-Հայաստան հարաբերություններում օրենսդրությունների մոտարկման իրականացում, տնտեսության տարբեր ոլորտներում պետական օժանդակության տրամադրման նկատմամբ առավել արդյունավետ վերահսկողության սահմանում, ազատ առևտրի զարգացում, տրամադրվող պետական օժանդակությամբ տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման դեպքերի կրճատում:

Բացի այդ, նախագծերի ընդունման անհրաժեշտությունը բխում է ԵՄ Հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների՝ մրցակցային միջավայրում առավելագույն տնտեսական արդյունքների հասնելու նպատակից:

Նախագծերի մշակման աշխատանքներն իրականացնելիս հաշվի են առնվել. «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» թվինինգ ծրագրի շրջանակներում Գերմանիայի և Լիտվայի համապատասխան փորձագետների առաջարկները, Համաշխարհային բանկի հետ «Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության վարկի (ԶՔՎ) երրորդ ծրագրի նախապատրաստման կանխավճարի թիվ ՄԶԸ Ք670-ԱՄ» վարկային ծրագրի շրջանակում «Մրցակցության քաղաքականության կարգավորիչ դաշտի հզորացում» տեխնիկական աջակցության ծրագրի ներքո ներգրավված փորձագետների առաջարկները:

Նշված նախագծերի ընդունմամբ էապես կբարելավվի Հանձնաժողովի

գործունեության արդյունավետությունն ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման, Օրենքի խախտումների կանխման, բացահայտման և հետևանքների վերացման, սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից, կբարձրանա գնումների օրենսդրության վերահսկողության արդյունավետությունը, կկատարելագործվի բողոքարկման ընթացակարգը, կստեղծվեն գործուն մեխանիզմներ գնումների գործընթացում դրսևորվող խախտումների բացահայտման, վերացման, խախտում թույլ տված սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման առումով:

Ներկայումս առկա են մի շարք խնդիրներ, որոնք հնարավորություն չեն տալիս Հանձնաժողովին արդյունավետորեն լուծելու իր առջև դրված խնդիրները:

✓ Ներկայումս Հանձնաժողովն օժտված չէ բավարար վերահսկողական լիազորություններով:

✓ Գործող Օրենքով սահմանված տուգանքի չափերը միասնական չեն և չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին:

✓ Հանձնաժողովի գործունեության, միջազգային փորձի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքում առկա են մի շարք անհստակություններ, բացեր, սողանցքներ, որոնք բացասաբար են անդրադառնում Հանձնաժողովի գործունեության արդյունավետության վրա:

✓ Պետական գնումների գործընթացում իրականացվում են պետական մարմինների կողմից այս կամ այն տնտեսվարողին չիմնավորված առավելությունների տրամադրում, ինչը չի նպաստում մրցակցային միջավայրի ձևավորմանը:

✓ Ներկայումս առկա են մի շարք խնդիրներ պետական օժանդակության թափանցիկության ապահովման ոլորտում, որոնք հանգեցնում են մրցակցության խաթարումների և կարող են վնասակար ազդեցություն ունենալ Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև ազատ առևտրի և համագործակցության վրա: Հայաստանի Հանրապետությունը ներկայումս գտնվում է պետական օժանդակության կանոնների կատարելագործման սկզբնական փուլում: Բացի այդ, պետական օժանդակության տրամադրմամբ շատ հաճախ սահմանափակվում, կանխվում կամ արգելվում է տնտեսական մրցակցությունը, վնաս է հասցվում մրցակցային իրավիճակին, որոշ տնտեսվարող սուբյեկտների կամ սուբյեկտների խմբի համար

ստեղծվում են արտոնյալ պայմաններ և այլն: Պետական օժանդակության հետ կապված հարաբերությունները ներկայումս կարգավորվում են միայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածով, ինչը բավարար չէ ոլորտի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:

Մրցակցության քաղաքականության դերը միայն շուկայի մասնակիցների նկատմամբ մրցակցային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման մեջ չէ: Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ մրցակցության վրա ոչ պակաս ազդեցություն են թողնում պետական մարմինների գործողությունները, ինչպես նաև անգործությունը, մասնավորապես տարբեր տիպի վարչական խոչընդոտների ստեղծումը, չհիմնավորված առավելությունների տրամադրումը և այլն:

Մրցակցության զարգացման և բարեխիղճ մրցակցային միջավայրի ստեղծման դանդաղեցնող մեկ այլ հիմնախնդիր վերաբերում է պետական գնումների ոլորտին:

Պետական մարմինների կողմից մրցակցության օրենսդրությանը հակասող գործողությունների ժամանակին կանխումն անմիջական դրական ազդեցություն կունենա տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի վրա: Ուստի, պետական մարմինների մրցակցությանը խոչընդոտող, սահմանափակող գործողությունների կանխման նպատակով Հանձնաժողովը 2013 թվականին նախատեսում է մշակել համակարգային և համալիր մոտեցումներ:

Նշված հարցի առնչությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի զարգացման նպատակով շարունակվում է արդյունավետ համագործակցությունը բազմաթիվ միջազգային կառույցների հետ: Ներկայումս անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի մշակման համար ակտիվ համագործակցություն է ընթանում Համաշխարհային բանկի, ԵՄ-ի հետ: Մրցակցային միջավայրի և Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով ներկայումս ԵՄ-ը, ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ ինչպես նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ իրականացվող ծրագրերի շրջանակներում պարբերաբար փորձագետներ են հրավիրվում Հանձնաժողովի կողմից հարուցված խնդրահարույց վարչական վարույթների կապակցությամբ

խորհրդատվություն կազմակերպելու նպատակով:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության և ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակներում շարունակվում է մրցակցային քաղաքականության իրականացման բնագավառում փորձի փոխանակումը, համատեղ ուսումնասիրությունների, վարույթների, դիտանցումների և ստուգումների իրականացումը, ինչպես նաև պրակտիկ օժանդակության ցուցաբերումը մի շարք կարևոր ուղղություններով: Պարբերաբար իրականացվող այցերի ընթացքում քննարկվում են արդյունավետ համագործակցության իրականացմանն ուղղված հիմնական հարցերը, առկա մրցակցային իրավիճակին համապատասխան՝ հանձնաժողովների կողմից լուծման ենթակա խնդիրների առանձնահատկությունները և շրջանակները, ինչպես նաև հրավիրվում համատեղ նիստեր մի շարք հրատապ մրցակցային խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Այցի վերջում, հասարակությանը մրցակցային քաղաքականության և խնդիրներին իրազեկման նպատակով երկու հանձնաժողովների նախագահները մամուլի ասուլիս են տալիս զանգվածային լրատվական միջոցներին, պատասխանում նրանց և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերին:

Հանձնաժողովների միջև փորձի փոխանակում է իրականացվում առաջին անհրաժեշտության (ռազմավարական) մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակի պարզման, այդ շուկաների կենտրոնացվածության աստիճանի որոշման, գերիշխող դիրքի առկայության բացահայտմանն ուղղված մոտեցումների և մեթոդաբանությունների ուղղություններով: ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում Հանձնաժողովի անդամները հաճախ են կոնկրետ մրցակցային թեմաներով սեմինարներ իրականացնում, տալիս պարզաբանումներ կայացրած որոշումների հիմնավորումներին, օժանդակում նրանց կողմից իրականացվող աշխատանքներին: Գնագոյացման հարցերի ուսումնասիրության նպատակով երկու հանձնաժողովներում ստեղծվել են աշխատանքային խմբեր, առաջնահերթ պարզելու գնագոյացման ընթացքը ալյուր, հաց, հացամթերք, միս, մսամթերք, կարագ, մակարոնեղեն, շաքարավազ, ընդեղեն, ձավարեղեն ապրանքային շուկաներում:

Միաժամանակ, Հանձնաժողովն ապահովում է մրցակցության կանոնների խթանման նպատակով կազմակերպվող համաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին ԼՂՀ ՀԾՏՄԿՊ Հանձնաժողովի մասնակցությունը, կազմակերպում ուսումնական – մասնագիտական քննարկումներ:

Մյուս կողմից Հանձնաժողովը շարունակում է աշխատանքներ տանել մարզերում «մրցակցային մշակույթի» ձևավորման ուղղությամբ: Այդ տեսանկյունից Հանձնաժողովն ուղղել է իր գործողությունները Հայաստանի մարզերում Օրենքի դրույթների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, համապատասխան նպատակային խմբերին ուսուցանելու և իրազեկելու Հանձնաժողովի գործառույթների և իրավասությունների վերաբերյալ, բարձրացնելու մարզերում գործունեություն իրականացնող տնտեսվարողների ներգրավվածությունը տնտեսական մրցակցության պաշտպանության գործընթացին: Ներկա դրությամբ այդպիսի աշխատանքներ արդեն տարվել են Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի և Լոռու մարզերում: Հետևաբար, Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ներդնել նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք մնում են Հանձնաժողովի համար առ այսօր արդիական և միևնույն ժամանակ՝ խնդրահարույց: Հանձնաժողովն իրականացնում է աշխատանքներ սպառողների շահերի պաշտպանության ոլորտում: Ուստի շարունակում է սերտ համագործակցել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: Արդյունքում ոչ միայն ապահովում է հետադարձ կապ սպառողների հետ, այլ նաև ստանում է ազդակներ անորակ ապրանքների և մատուցվող ծառայությունների, ինչպես նաև սպառողների շահերի նմանատիպ այլ ոտնահարման վերաբերյալ, որոնք նպաստում են սպառողների կողմից արձագանքման ակտիվացմանը և հասարակական վերահսկողությանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության հետագա զարգացումը և հակամենաշնորհային հսկողության և կարգավորման աճող դերն արդիական են դարձնում մրցակցության քարոզչությանն ուղղված միջոցառումները: Մրցակցության քարոզչություն ասելով՝ առաջին հերթին հասկացվում է տեղեկատվական այնպիսի պայմանների ստեղծումը, որոնց դեպքում շուկաների արժեքային շղթայում գործող

գործարար համայնքին և այլ շահառուներին հասկանալի կլինի արդար և բարեխիղճ մրցակցության պահանջների պահպանման անհրաժեշտությունը, մրցակցային մոտեցումների արդյունավետությունը, օրենսդրության դրույթների պարտադիր լինելու սկզբունքը:

Հանձնաժողովը մշտապես ակտիվ քայլեր է իրականացնում Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես, տարբեր լրատվամիջոցների տնտեսական հարցերը լուսաբանող լրագրողների մասնակցությամբ հաճախակի կազմակերպվում են սեմինարներ, որոնց ընթացքում լրագրողները հնարավորություն են ունենում տեղեկանալու Հանձնաժողովի գործունեության առաջնահերթություններին, քննարկելու մրցակցային խնդիրներին առնչվող հարցեր, ինչպես նաև Հանձնաժողովի մասնագետների և ԵՄ երկրներից հրավիրված փորձագետներից տեղեկանալու հանրությանը հետաքրքրող առավել կարևոր թեմաների մասին:

Հանձնաժողովը ներկայումս Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ ակտիվ աշխատանքներ է տանում տեղեկատվական - քարոզչական տեսահոլովակների նկարահանման ուղղությամբ: Հոլովակները մեծ չափով կնպաստեն Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ հասարակության, այդ թվում ինչպես սպառողի, այնպես էլ տնտեսվարողի իրազեկվածության բարձրացմանը: Հատկապես այս լսարանին ուղղված քարոզչությունը, ինչպես նաև վերջինների տեղեկացված լինելը կնպաստի ինչպես Հանձնաժողովի հանդեպ վստահության բարձրացմանը, այնպես էլ Հանձնաժողովի առավել արդյունավետ աշխատանքին: Իսկ ընդհանուր առմամբ այս ծրագրի իրագործումը կնպաստի ՀՀ-ում մրցակցային իրավիճակի բարելավմանը և սպառողների իրավունքների պաշտպանությանը: 2013-ի տարեսկզբից տեսահոլովակները եթեր կհեռարձակվեն տարբեր հեռուստաընկերություններով:

Ծրագրի կարևոր բաղադրիչներից է հասարակության հետ կապերի նոր մակարդակի ձևավորման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից Հանձնաժողովի խնդիրն է հասարակության կողմից մրցակցության կանոնների իմացության և համարժեք ըմբռնման ապահովումը, որոնք «մրցակցային մշակույթի» ձևավորման կարևոր նախապայմաններից են:

Հանձնաժողովը Ծրագրի խնդիրներից է համարում հասարակական խորհրդի աշխատանքների ակտիվացումը: Խորհրդի գործունեության նպատակներն են Հանձնաժողովին աջակցելը, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակությանը տնտեսական մրցակցության վերաբերյալ հարցերին մասնակից դարձնելը, մրցակցային միջավայրի զարգացմանը նպաստելը: Միևնույն ժամանակ, մրցակցության պաշտպանության առավել արդիական հիմնախնդիրներից են մնում տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունները, գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից չարաշահումները, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորումները, որոնք բացասական են ազդում մրցակցային միջավայրի և բարեխիղճ մրցակցության ձևավորմանը:

Ծրագրում նշված են այն միջոցառումները և մեխանիզմները, որոնք հիմնականում միտված են լինելու մրցակցային դաշտը կատարելագործող օրենսդրական փոփոխությունների կիրառմանը, ինստիտուցիոնալ զարգացումների խթանմանն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, ֆինանսական ու մարդկային ռեսուրսներով համալրմանը:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն Ծրագրի առաջին գլխում ներկայացված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև՝ հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, սահմանում է այն միջոցառումների ցանկը, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը, բարելավմանը և երկրի տնտեսական բնագավառի բարեփոխումների արդյունավետ ձևով խթանմանը: Վերոնշյալ միջոցառումները Հանձնաժողովը 2013 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականության հետևյալ գերակա ուղղություններով.

- Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների վերլուծությանն ուղղված աշխատանքներ,
- Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրություն, գնահատում, օրենքի խախտման դեպքում՝ պատասխանատվության միջոցի կիրառում,
- Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում, դրանց առկայության դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում,
- Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացում,
- Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում,
- Օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերում, ինչպես նաև պետական մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն,
- Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության դրույթների վերանայում միջազգային համագործակցության շրջանակներում,
- ՁԼՄ-ների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին, «թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին օպերատիվ արձագանքում,

- Քարոզչություն և հասարակության իրազեկվածության բարձրացում,
- Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում,
- Միջազգային կառույցների հետ համագործակցություն:

Նշված ուղղություններով գործողությունները Հանձնաժողովը ծրագրում է իրականացնել հետևյալ միջոցառումների միջոցով.

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Աղյուսակ 3

<<	Միջոցառում	Ժամկետ
1.	**Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաների վերլուծությանն ուղղված աշխատանքներ**	
	տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ մասնավորապես կենտրոնացվածության աստիճանի որոշում, բնակչության սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքատեսակների ապրանքային շուկաներում,	յուրաքանչյուր եռամսյակ
	բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի և ապրանքների գնագոյացման ուսումնասիրություն	տարվա ընթացքում
	ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբեյկտների մուտքի խոչընդոտների բացահայտում	
	նախկինում ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում:	
2.	**Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրություն, գնահատում, օրենքի խախտման դեպքում՝ պատասխանատվության միջոցների կիրառում և դադարեցում**	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	իրացման կամ ձեռքբերման խտրական գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում, գնահատում և վերլուծություն	
	ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում	
	միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն	
	համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն	
	միևնույն ապրանք(ներ)ի համար անհավասար պայմանների առաջարկման կամ կիրառման դեպքերի ուսումնասիրություն	
	պետական գնումների կամ մրցույթների կամ աճուրդների գործընթացում հակամրցակցային համաձայնությունների բացահայտում և կանխում	
3.	**Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում՝ հնարավոր չարաշահումների հայտնաբերման, կանխման ու վերացման նպատակով**	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված
	իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանման, կիրառման, կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ	

	պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերում, ուսումնասիրություն	վարչական վարույթների շրջանակներում
	առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների, լրացուցիչ պարտավորությունների պարտադրման դեպքերի հայտնաբերում	
	գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այնպիսի գործողությունների բացահայտում, որոնք խոչընդոտում են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն կամ հանգեցնում են շուկայից նրան դուրս մղելուն:	
4.	**Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն**	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում
	տնտեսվարող սուբյեկտների միացումների կամ միաձուլումների, տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերման, ինչպես նաև մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա ազդելու հնարավորության ձեռքբերում	
	գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումների բացահայտում	
	համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության մեթոդների կատարելագործում	
	հայտարարագրման ենթակա կամ տնտեսական մրցակցությունն էապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումների վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստում	
5.	**Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում**	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում	
	քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումների, ՁԼՄ –ների հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների, հսկիչ գնումների իրականացում	
6.	**Տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման կամ Օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերում, ինչպես նաև պետական մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն**	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում
	պետական կառավարման մարմինների որոշումների նախագծերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	
	պետական մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	
	պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների, մասնավորապես պետական գնումների ոլորտին առնչվող հարցերի ուսումնասիրություն	

7.	**Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության դրույթների վերանայում միջազգային համագործակցության շրջանակներում**	տարվա ընթացքում
	Օրենսդրական դաշտի բարելավման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում	
	Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում	
	Եվրոպական և ԱՊՀ անդամ պետությունների մրցակցային օրենսդրության հետ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման գործողությունների իրականացում, համապատասխան համաձայնագրերի կնքում (ըստ անհրաժեշտության)	
	աշխատակազմի և այլ շահագրգիռ խմբերի շրջանում սեմինարների, քննարկումների և հանդիպումների կազմակերպում	
8.	**ՁԼՄ-երի հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին, ինչպես նաև «թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին օպերատիվ արձագանքում**	տարվա ընթացքում
9.	**Քարոզչություն և հասարակության տեղեկացվածության բարձրացում**	տարվա ընթացքում
	զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում	
	ինտերնետային ցանցում on–line ռեժիմով Հանձնաժողով ներկայացված դիմումներին և բողոքներին արձագանքում	
	հասարակության ներկայացուցիչների ներգրավում տնտեսական մրցակցության խթանման և հիմնախնդիրների լուծման գործընթացին	
	սեմինարների կազմակերպում ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար	
	քարոզչությանն ուղղված տեսահոլովակների պատրաստում և դրանց հեռարձակման ապահովում	
	տեղեկագրերի, քարոզչական բուկլետների և բրոշյուրների հրատարակում	
	մրցակցության հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ մարզերում համապատասխան շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացում	
	հասարակական խորհրդի նիստերի անցկացում	
10.	**Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում**	տարվա ընթացքում
	Ամբողջական տեղեկատվական բազայի ստեղծում	
	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի բարելավում	
11	**Միջազգային կառույցների հետ համագործակցություն**	տարվա ընթացքում

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, ելնելով օրենսդրությամբ ամրագրված գործառույթներից, Ծրագիրն իրականացվում է մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Օրենքի խախտման վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքում:
2. Ամենօրյա շարունակական դիտանցում և դրանց արդյունքների վերլուծություն:
3. Օրենքի խախտումների հայտնաբերման նպատակով ստուգումների և հսկիչ գնումների իրականացում:
4. Պատասխանատվության միջոցների մեղմման սկզբունքի կիրարկում և դրա համար անհրաժեշտ պայմանների ապահովում:
5. Օրենքի խախտումների կանխարգելման նպատակով զգուշացում:
6. Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ մշտական հսկողության իրականացում:
7. Հասարակական խորհրդի նիստերի անցկացում:
8. Օրենքի դրույթների արդյունավետ կիրարկումն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի կատարելագործում և մշակում:
9. Իրավական ակտերի ուսումնասիրություն և մրցակցության խոչընդոտների վերացում:
10. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում, այդ թվում՝ պաշտոնական ինտերնետային կայքի թարմացում և ԶԼՄ-ներին օպերատիվ տեղեկատվության տրամադրում:
11. Հասարակության իրազեկվածության բարձրացում, այդ թվում՝ տեղեկագրերի հրապարակման, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպման միջոցով Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման հնարավորության վերաբերյալ տեղեկացում:
12. Համագործակցություն պետական կառավարման մարմինների, հասարարական և միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

III. 1. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Սակայն Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մրցակցային խնդիրները մեծապես կապված են նաև այլ պետական մարմինների գործունեության կամ այլ ոլորտները կարգավորող իրավական ակտերի անկատարության հետ: Հենց դա է պատճառը, որ Հանձնաժողովի կողմից բացահայտված և բացահայտվող մրցակցային խնդիրներն արդեն իսկ հետևանք են, իսկ այդ խնդիրները ծնող պատճառները շատ դեպքերում դուրս են գտնվում Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից: Ուստի ակնհայտ է, որ Հանձնաժողովն ի վիճակի չէ միայնակ պայքարելու Հայաստանի Հանրապետությունում առկա բոլոր մրցակցային խնդիրների դեմ, անհրաժեշտ է բոլոր իրավասու պետական մարմինների ակտիվ և համակողմանի գործողությունները Հայաստանի Հանրապետությունում մրցակցային իրավիճակի բարելավման նպատակով:

Այդ իսկ պատճառով, առկա մրցակցային խնդիրներին լուծում տալու նպատակով Հանձնաժողովը փորձում է մշտապես համագործակցել այլ պետական մարմինների հետ: Մասնավորապես, երբ մրցակցային խախտումներ ծնող խնդիրներ են բացահայտվում այլ պետական մարմինների գործունեության ոլորտներում, Հանձնաժողովը մշտապես տեղեկացնում է այդ մարմիններին առկա բացահայտումների վերաբերյալ և առաջարկություններ ներկայացնում խնդիրների կարգավորման նպատակով:

Մասնավորապես, 2011 թվականի ընթացքում Հանձնաժողովը բազմաթիվ մրցակցային խնդիրներ է բացահայտել, որոնք առնչվում են նաև այլ պետական մարմինների գործունեությանը: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը համապատասխան առաջարկներով կամ գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարություններին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության ծառայությանը, ՀՀ մարզպետարաններին և այլն:

Բացի այդ, Հանձնաժողովն ակտիվ համագործակցում է իրավապահ մարմինների, հատկապես ՀՀ գլխավոր դատախազության հետ, որտեղ ուղարկվում են Հանձնաժողովի կողմից բացահայտված այն խախտումների վերաբերյալ տեղեկատվություն, որոնք կարող են պարունակել նաև ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ:

Այսպիսով, վերը նշված խնդիրների տեսանկյունից շատ են կարևորվում Հանձնաժողովի կողմից ձեռնարկված միջոցառումները Հանձնաժողովի իրավասության շրջանակից դուրս գտնվող մրցակցային բնույթի խնդիրների կարգավորման ուղղությամբ: Հենց այդ, ինչպես նաև բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու և մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև էլ Հանձնաժողովն առանձնահատուկ խնդիրների կարգավորման համար համագործակցության հուշագրեր է կնքել և համագործակցում է ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ: Սակայն, դեռևս առկա են որոշակի խնդիրներ, որոնք լուծելու համար անհրաժեշտ է ապահովել մրցակցային հիմնախնդիրների նկատմամբ միասնական մոտեցում, ընդլայնել համագործակցության շրջանակը և սահմանել դրանց իրականացման հստակ մեխանիզմները:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը նախատեսում է ավելի ակտիվացնել հասարակական խորհրդի գործունեությունը, որի նպատակներն են Հանձնաժողովին աջակցելը, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակությանը տնտեսական մրցակցության վերաբերյալ հարցերին մասնակից դարձնելը, մրցակցային միջավայրի զարգացմանը նպաստելը: Խորհրդի գործունեությունը կարևորվում է նաև այն փաստով, որ խորհրդի նիստերին, բացի խորհրդի անդամներից, կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, փորձագետներ, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների, շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ, այլ անձինք, ինչը նպաստելու է հասարակության տեղեկացվածության բարձրացմանը մրցակցային միջավայրի բարելավմանն առնչվող հարցերում:

Տնտեսական մրցակցության քաղաքականության մշակման և արդյունավետ իրականացման գործում հիմնական խոչընդոտներից են հանդիսանում տնտեսական մրցակցության միասնական քաղաքականության ծրագրային մոտեցումների և համապարփակ փաստաթղթերի բացակայությունը: Այս առումով Հանձնաժողովի ռազմավարությունը նպատակաուղղվելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցության ընդլայնմանը՝ նպաստելով մրցակցային քաղաքականության ձևավորման գործընթացին, ինչպես նաև մրցակցային օրենսդրության բարեփոխումներին:

Հանձնաժողովի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև համագործակցության համաձայնագրի ներքո ստեղծվել է աշխատանքային խումբ՝ համապատասխան ընթացակարգեր մշակելու նպատակով, որոնք պետք է հնարավորություն ընձեռեն բացահայտելու երկու մարմիններին ֆինանսական շուկաների ոլորտում մրցակցային կանոնները խախտողներին, այդ թվում՝ համակենտրոնացումների արդյունավետ վերահսկման նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքը կատարած անձանց վերաբերյալ:

Հանձնաժողովի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի փոխհամագործակցության հուշագրի ներքո համագործակցության ընդլայնումը կնպաստի ուսումնասիրվող գործերի համար ոչ նպաստավոր նախադեպերի առաջացումը կանխելուն և հնարավորություն կստեղծի մինչև վերջնական որոշում կայացնելը քննարկումներ կազմակերպել:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերաբերյալ տվյալների տրամադրումը մեծ նշանակություն ունի Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթների և ուսումնասիրությունների համար: Հանձնաժողովը շարունակելու է վերջինիս հետ համագործակցությունը՝ իրականացնելով ինչպես իրենց կողմից հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված համատեղ աշխատանքները, այնպես էլ տրամադրելով Հանձնաժողովի կողմից ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն:

Պետական գնումների բնագավառում բարեփոխումների համալիր ծրագրերի իրագործմանը նպաստելու, մասնավորապես հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ու կանխարգելման համակարգի ներդրման և պետական գնումների գործընթացի կազմակերպման ժամանակ մրցակցային սկզբունքների կիրառման համար, Հանձնաժողովը համագործակցում է ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Այս առումով, կարևորվում է պետական գնումների բնագավառում համաձայնեցված գործողություններին ուղղված ռիսկերի նվազեցումը:

Գործունեության ընթացքում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք Հանձնաժողովի կիրարկման դաշտից ուղղակիորեն դուրս են, և հաճախ անհրաժեշտություն է առաջանում պետական այլ պատասխանատու մարմինների հետ համատեղ լուծումներ գտնել:

Պետական մարմինների և գործարար հանրության շրջանում մրցակցության օրենսդրության հանդեպ ունեցած պատասխանատվության գիտակցման ամրապնդման, իրավախախտումները կանխարգելող միջոցառումների իրագործման և հնարավոր բոլոր օղակներում մրցակցային միջավայրի հիմնախնդիրներին համալիր լուծումներ տալու նպատակով, Հանձնաժողովը համագործակցելու է ՀՀ կառավարության և պետական այլ մարմինների հետ:

Մրցակցային քաղաքականության զարգացման գործընթացում կարևոր դեր ունի դատական համակարգը: Մրցակցային մարմնի անկախության և հեղինակության մակարդակի վրա անմիջական ազդեցություն են թողնում դատարանների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քննվող գործերով կայացվող վճիռները: Տնտեսական մրցակցության բնագավառի գործեր քննող դատավորների ոչ բավարար փորձն ու մասնագիտացումը և գործերի քննության ժամկետների ձգձգումները հաճախ լուրջ խնդիրներ են առաջ բերում, այդ թվում՝ Հանձնաժողովի համար զգալիորեն նվազեցնելով վերջինիս գործունեության արդյունավետությունը և մարմնի նկատմամբ վստահությունը:

Իրավական որոշակի ընթացակարգերով առաջնորդվելուց բացի կարևորվում է, որ դատավորները կարողանան համարժեք կերպով ընկալել մրցակցային օրենսդրության գաղափարը, կարողանան խորապես հասկանալ տնտեսական

մրցակցության պաշտպանությանն ուղղված քննվող գործերի էությունը և տնտեսական վերլուծության մոտեցումները: Ներկա խնդիրներից է նաև Հանձնաժողովի համապատասխան որոշումների կատարումն ապահովելու համար դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա քննվող գործերի տևականությունը:

Դատական համակարգի բարեփոխումների գործընթացում այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ներգրավել մասնագիտացված դատավորներին ու դատական ծառայողներին և բարձրացնել նրանց հետագա կարողությունների և տեղեկացվածության աստիճանը՝ օտարերկրյա պետություններում մրցակցային գործերի քննության կարգի և ձևավորված պրակտիկայի ուսումնասիրման միջոցով: Խնդիրների լուծման լավագույն ուղին մնում է քննարկումների և սեմինարների կազմակերպումը, ինչպես նաև միջազգային և տեղական փորձագիտական ներուժի արդյունավետ օգտագործումը:

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Տնտեսական ինտեգրման և միջազգային շուկայի գլոբալիզացման գործընթացների պայմաններում, որոնք անմիջական ազդեցություն են թողնում ազգային տնտեսությունների զարգացումների վրա, Հանձնաժողովի գործունեությունը ուղղորդվելու է, մի կողմից հանրության համար տնտեսապես անարդյունավետ համակենտրոնացումների ստեղծման կանխարգելմանը, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից շուկայական իշխանության չարաշահման և հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը, մյուս կողմից նպաստելու է արդար մրցակցային միջավայրի ապահովմանը և ապրանքային շուկաների զարգացմանը:

Մրցակցային առավելություն ստանալու, ներքին և արտաքին շուկաներում մրցունակությունը բարձրացնելու նպատակով խոշոր ընկերությունների գործողությունները, վերջին ժամանակահատվածում, ուղղված են հնարավոր միասնական և համաձայնեցված քաղաքականության իրականացմանը, որն ամբողջ աշխարհի մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների, այդ թվում՝ Հանձնաժողովի համար առաջնային խնդիր է մշակել և համատեղ քայլեր իրականացնել տնտեսական մրցակցության պաշտպանության ուղղությամբ:

Այս տեսանկյունից Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակում շարունակելու է համագործակցել միջազգային կառույցների և օտարերկյա համանման մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների հետ՝ կադրային ներուժի հզորացման, կարողությունների զարգացման և որակավորման բարձրացման, միջազգային փորձի ուսումնասիրության և առաջավոր փորձի ներդրման, երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների ընդլայման, ինչպես նաև գործող օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ:

Հանձնաժողովը ծրագրային ժամանակաշրջանում հետևողական է լինելու նաև իր իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ որդեգրած Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարմանը, նպաստելու է երկրի տնտեսական համագործակցության զարգացմանը, ինչպես նաև Եվրոպական

Միության ու շահագրգիռ գործընկերների միջև տնտեսական ինտեգրման խորացմանը:

Այս տեսանկյունից 2013 թվականի ընթացքում Հանձնաժողովի միջազգային գործունեությունը և համագործակցությունը նպատակաուղղվելու է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ/WTO), ՀՀ-ԵՄ Գործընկերության ու համագործակցության համաձայնագրի (ԵՀՔ/ENP), Արևելյան գործընկերության, այդ թվում՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ/DCFTA) շրջանակում մրցակցային բնագավառին առնչվող փոխադարձ պարտավորությունների կատարմանը և նոր ստեղծված կապերի ամրապնդմանը:

Օտարերկրյա մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների հետ համագործակցության ընդլայման և գործուն մեխանիզմների ստեղծման համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պայմանները.

- մրցակցային օրենսդրության դրույթները համապատասխանեցնել միջազգային նորմերին,
- պահպանել փոխանակվող տեղեկատվության գաղտնիության,
- մշակել առաջիկա երեք տարիների տնտեսական մրցակցության օրենսդրության կիրարկման ռազմավարականն ուղղությունները,
- միջազգային հանրությանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում մրցակցային ոլորտին առնչվող զարգացումներին և նպաստել երկրի ընդհանուր վարկանիշի բարձրացմանը:

Վերոնշյալ պայմանների ապահովման իրականացման համար Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացնելու երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակում, մասնավորապես.

- Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը շարունակելու է մասնակցել Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN), ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ/MCAП), Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) տարեկան

նիստերին և հանդիպումներին, ինչպես նաև աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքներին:

- Հայաստանում Եվրամիության պատվիրակության և ԵՄ անդամ պետությունների մրցակցային մարմինների հետ մշակելու և իրականացնելու է նպատակային ծրագրեր, որոնք կնպաստեն հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության և վերջինիս կիրարկման մեխանիզմների կատարելագործմանը՝ ԵՄ չափանիշներին համահունչ:

ԵՄ Թվինինգ ծրագրային գործիքի կիրառման ներքո 2013 թվականների առաջին ամիսներին Հանձնաժողովը շարունակելու է իրականացնել «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» ծրագիրը՝ խթանելով և ամրապնդելով երկկողմ հարաբերություններ ԵՄ անդամ երկրների՝ Գերմանիայի Դաշնության և Լիտվայի Հանրապետության մրցակցային մարմինների հետ: Հիմնականում աշխատանքները վերաբերելու են Թվինինգ պայմանագրով նախատեսված 2013 թվականի ընթացքում կատարվելիք միջոցառումների իրականացմանը:

Ավելին, 2013 թվականի առաջին եռամսյակում նախատեսվում է կազմակերպել ամփոփիչ համաժողով՝ նպատակ ունենալով հանրությանը, շահագրգիռ պետական մարմիններին և միջազգային կազմակերպություններին տեղեկացնել Թվինինգ ծրագրի արդյունքների, ներկայացնելու մրցակցային օրենսդրության բարեփոխումների գործընթացի և իրազեկելու Թվինինգ ծրագրի ընթացքում Հանձնաժողովի ձեռքբերումների մասին:

Հանձնաժողովը Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ՝ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի ներքո, ընդլայնելու է համագործակցությունը մրցակցության քաղաքականության կիրարկման բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների ծրագիր իրականացնելու առումով: Ծրագրի հիմնական ուղղություններն են՝ գործերի վարման շուրջ միջազգային փորձագետի խորհրդատվություն, Հայաստանի

Հանրապետությունում մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացում, ոլորտային կարգավորողների միջև համագործակցության համապատասխանեցում Եվրամիության չափանիշներին, Հանձնաժողովի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում, ինչպես նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության կարտելային գրասենյակի (Բունդեսկարտելամտ) մասնագետների միջև փորձի փոխանակում:

Նախորդ տարիներին կնքված երկկողմ համաձայնագրերի շրջանակում շարունակվելու է համագործակցությունը Ֆրանսիայի և Ռումինիայի մրցակցային մարմինների հետ մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկման քարոզչությանն ուղղված միջոցառումների, աշխատակազմի կարողությունների զարգացման և մարմնի առավել թափանցիկ գործունեության խթանման ուղղությամբ:

- Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային ուղղություններից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է Համաշխարհային բանկի (ՀԲ/WB) հետ շարունակել համատեղ ծրագրի իրականացումը, որը կնպաստի մրցակցային օրենսդրության կիրարկմանն ուղղված բարեփոխումներին, կխթանի Հանձնաժողովի աշխատակազմի կարողությունների բարելավմանը և կբարձրացնի հանրության իրազեկվածությունը:
- Հաշվի առնելով նախորդ տարի տնտեսական հարցերով հայ-ամերիկյան աշխատանքային խմբի գործողությունների ծրագրի շրջանակում Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) հետ համագործակցության դրական արդյունքները և ձեռքբերումները, ծրագրային տարում Հանձնաժողովը շարունակելու է համատեղ աշխատանքները ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների տվյալների բազայի ընդլայման, այնպես էլ ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովի (ԱԴՀ/FTC) և Արդարադատության դեպարտամենտի (ԱԴ/DOJ) հետ կապերի հաստատման և համատեղ նպատակային ծրագրերի իրականացման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, աշխատանքներ են

իրականացվելու ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի շրջանակում, որի նպատակն է սննդարդյունաբերության, դեղագործական/ բիոտեխնոլոգիական, տուրիզմի և բարձր տեխնոլոգիաների արժեքային շղթաներում ուսումնասիրել և բացահայտել Հայաստանում առկա մրցակցության սահմանափակումները և նպաստել իրականացելու հակամրցակցային վարքագծին հակազդող միջոցառումներ: Ելնելով երկրի առջև ծառացած արդիական մարտահրավերների հրամայականից, աշխատանքներ կիրականացվեն նաև այլ ոլորտներում համանման ծրագրերի մշակման և իրագործման ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, միջազգային համագործակցությունը շարունակվելու է նաև վերապատրաստման դասընթացների, գործերի ուսումնասիրության ընթացքում փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման ուղղությամբ: Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցելու է միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդելու է այլ երկրների համանման մարմինների և տնտեսական մրցակցության հարցերով զբաղվող միջազգային կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման, հնարավոր համատեղ վարույթների իրականացման և միջազգային չափանիշներին համապատասխան մոտեցումների որդեգրման նպատակով: